

Իսկ «La Turquis d'Asie» գրքի հեղինակը չի տալիս հայերի ընդհանուր թիւը, այլ առաջ և բերում իւրաքանչիւր վիլայէթի ու սանջաղի ազգաբնակչութեան ցուցակը առանձին առանձին: Դրանց միջից գտելով հայերի թիւը, կը ստանաք՝ Փոքր Ասիայում 939,000, իսկ ամբողջ Թիւրքիայում 1,144,000. ուրեմն դարձեալ մի տարբեր կարծիք: Իսկ թէ այդքան բազմազան կարծիքներից որն է աւելի ճիշտը, որն է աւելի մօտ իրականութեանը—դա մի ծանրակշիռ հարց է, որին, գուցէ, վերագառնանք առանձին յօդուածով:

Ե. ԹՈՓՉԵԱՆ

37) Ս. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ և Տ. ՌԱՇԵՄՍԶԵԱՆ, Էլէմենտար-նութիւն, (ժողովրդական բնագիտական գրադարան № 6), 1902 թ. Ալէքսանդրօպօլ, լինն է 15 կոպ.:

Այդ պարոնների կաղմած միւս «բնագիտական» գրոյցների հետ անծանօթ ենք, սակայն, եթէ նրանք էլ գրուած են այս «էլէմենտարականութեան» նման թէ ոճով և թէ հմտութեան կողմից—առանձին ուրախանալու առիթ չունի մեր ժողովուրդը: Գիտութիւնը ժողովրդականացնելու իղձը չառ լաւ բան է, սակայն միայն իղձը բաւական չէ մի գործ աջող կերպով գլուխ բերելու համար: Եւրօպայում ճիշտ գիտութիւնները ժողովրդականացնելու փորձը անում են այն գիտնականները, որոնք բացի մասնագիտական հմտութիւնը՝ ունեն նաև կենդանի ու հետաքրքրական ոճով պատմելու չնորհք. մինչդեռ մեր այդ երկու պարոնները նախ՝ բաւական մակերևոյթային, անկատար տեղեկութիւններ ունեն այն երեւոյթների մասին, որ ձգտում են ժողովրդականացնել և, երկրորդ՝ բոլորովին անչնորհք են իրանց մտքերը ճիշտ գիտութիւններին վայել կերպով արտայայտելու: Երկար կանգ առնել այդ գրքոյկի վրայ մտադիր չենք. բաւական է հէնց այն, որ այդ պարոնները «ներկայ գիտութիւնից» խօսելով, սկի տեղեկ չեն այդ գիտութիւնից: Ինքներդ դատէք. «աղաներից մէկը» հարցնում է.

—Բայց ի՞նչ ոյժ է այդ էլէմենտարականութիւնը:

Դրանք պատասխանում են.

—Ներկայ գիտութիւնը հաստատ կերպով չի կարող այդ բանը որոշել, այլ ասում է. այստեղ էլ մարդիկ գործ ունեն մի ծածուկ նիւթի կամ ֆլուդիումի հետ:

Մի այլ տեղ (էրես 14) արւում է այսպիսի բացատրութիւն «ֆլուդիումի» մասին.

«Գիտնականներն ընդունում են, որ աշխարհում գտնուած

բոլոր առարկաների մէջ, մի տեսակ չափազանց նաբբ նիւթ կայ կամ ինչպէս իրանք են առում Հայագիւում, դա մի այնպիսի նիւթ է, որ ոչ մի մարդ ոչ տեսել, ոչ լսել, ոչ հասած է և չի էլ կարելի: Բացի դրանից, նրանք կարծում են, թէ այդ ֆրիգիաները երկու տեսակ նիւթից է կազմուած:

— Բայց վարձարեւա, ա՛րանց է գտնուած այդ շատ նաբբ նիւթը:

— Էնց բանն էլ նրանումն է, որ այդ հաստատ չգիտեն, թէ առարկաների անտեսանելի և մաքուր անբաժանելի մասնիկների կամ առանձնների մէջն են գտնուած, թէ նրանց մակագիւնների, մէջ լայտանի չէ. բացի դրանից առում են, որ շնայելով ֆրիգիաները երկու նիւթից է կազմուած, բայց և այնպէս նրանք մարմինների մէջ քնած, հանգիստ գրութեան մէջ են: Երբ մենք առարկան տրորում ենք՝ այն ժամանակ ֆրիգիաները դարձնում, շարժում է, երկու տեսակն էլ իրարուց բաժանուած են և իրար լծաւ չեն կարող ձայ, մէկը միտին կարծես դուրս է վաճղում, դրա համար էլ մի տեսակ ուժը, էլէքտրականութիւնը ձեռն է տրորուող առարկայի մէջ, միտ տեսակը անցնում է մահուդի կամ մետաքսի մէջ, ահա այնպէս են մարմինները ստանում մեզ զգալի, էլէքտրական լատկութիւնը. ուրիշ խաբուով մարմինների մէջ բաժանուած էլէքտրականութիւնը առաջ է բերում էլէքտրական երևոյթներ *):

Ինչպէս երևում է, այդ պարոնները ի նկատի ունեն Սէյ-մերի և Ֆրանկլինի թէօրիւմները էլէքտրական հեղուկի մասին. մինչդեռ յայտնի է, որ վաղուց արիւի է գտնուած՝ սպեցիֆիկ էլէքտրական հեղուկների թէօրիւմ:

Յարազէյի, Մաքսուէլի հետազոտութիւններից և 1888 թուականին Հերցէնի հռչակաւոր փորձերից յետոյ շնորհայ գիտութիւնը էլէքտրական, ինչպէս և մագնիսական ու լուսային երևոյթների էութիւնը, եթերի զանազանակերպ դեֆորմացիաների և պերտուրացիաների, այսինքն՝ եթերի շարժման մէջ է գտնում:

Վերև բերած քաղուածքը արդէն որոշ զաղափար է առլիս գրուածքի խառնալիտի և ճապազ ոճի մասին. սակայն ահա մի նմուշ ևս.

Եթէ էլէքտրականութեան համար բոլոր ստաններս կարծ, համառոտ կերպով ամփոփեմ, մտաւորապէս այս կստանանք:

Բնութեան բոլոր ուժերից, որոնց մարդ տիրապետել և օգտուում է, համարելն էլէքտրականութիւնն ամենից զօրաւոր, օգտակար և յարմարն է: Այս ուժը մեզ տալով լուս, զիշերը ցերեկ է զարնում, գործը չափազանց արագացնում է աշխատանքի ժամերը շատացնում է և մարդկանց միջոց տալիս կեանքի հարկաւոր պիտոյքներն աւելի ու աւելի հեշտ ձեռք բերել: Էլէքտրականութիւնը մեզ տալիս է տաքութիւն, շարժելու, գործելու անսպառ ուժ. մեր մաքերի ամենատարազ փոխանակութիւն, ուրեմն ժամանակի, տարածութեան կարծութիւն և ուրիշ բազմատեսակ հազարաւոր օգուտ-

*) Ուղղագրութիւնը և կէտագրութիւնը բնագրինն է:

ներ, որոնց մի մասը դուք իմացաք. այնպէս որ, չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ—մարդու կատարած գիտելի երեք քառորդ բաժինը միասին վերցրած, չեն կարող հաստատուել էլէքտրականութեան օգուտների հետ, եթէ այս բոլորի հետ աչքի առաջ ունենանք նրա ապագայ գիտելիքն ու արդիւնքներն՝ այն ժամանակ պէտք է նրան համարենք մարդկային մտքի ամենահարուստ, ամենապտղատու ծառը:

Իդուր չէ ասած. «Ոճը—ինքը մարդն է»...

Շատ աւելի լաւ կ'անէին պ.պ. Ռաշմաճեանը և Զիլինկա-րեանը, եթէ՝ հեղինակելու փոխարէն, թարգմանէին կամ փոխադրէին աւելի հմուտ և տաղանդաւոր ժողովրդականայնողների գրքայինք. հէնց, օրինակի համար, պ. Վ. Լուսկիվիչի զրոյց-ների այն սերիան, որ հրատարակել է Պավէնկովը:

Բն.

38) Իվան Տուրգենևի, «Արձակ բանաստեղծութիւններ». թարգմ. Ալ. Ծատուրեան, 13 էր., Բագու, 1902 թ., գ. 2 կ.:

Այս փոքրիկ ժողովածուի մէջ արտատպուած են Տուրգենևի յօրինած ու պ. Ալ. Ծատուրեանի թարգմանած և արդէն տպուած «Արձակ բանաստեղծութիւններից» վեցը:

Հրատարակիչը աւելորդ է համարել յայտնել այդ հանգամանքը ընթերցողներին, —մի բան, որի բացատրութիւնը պէտք է վնասուի մեղանում տիրող գրական անիշխանութեան մէջ:

Հրատարակիչը աւելորդ է համարել նաև հոգ տանել, որ Տուրգենևի գեղեցիկ «Արձակ բանաստեղծութիւնների» գեղեցիկ թարգմանութիւնը տպուի առանց այնպիսի վրիպակների, ինչպէս «Ախեր», «Ի՞նչ կա» որ» և այլն:

Արդէն ասացի, որ թարգմանութիւնը գեղեցիկ է. Պ. Ծատուրեանի նման ոճագէտից ուրիշ տեսակ թարգմանութիւն չէր էլ կարելի սպասել: Մենք կը ջանկանայինք միայն, որ պ. Ծատուրեան աւելի մեծ ուշադրութիւն դարձնէր թարգմանութեան ճշտութեան վրայ, որովհետև ամեն մի բառ իր նշանակութիւնն ունի գրչի այնպիսի վարպետների շարդրութիւնների մէջ, ինչպէս է Տուրգենևի:

Երբ Տուրգենևի գրում է, օրինակի համար, թէ ճանդուկները թռչկոտում էին гуськомъ և бойко այդպէս էլ պէտք է թարգմանել և ոչ թէ «խմբով» ու «ախորժալի»:

Տ. Յ.